Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-544-18.06.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում՝

ա. «վճարող են համարվում» բառերը փոխարինել «վճարող կարող են համարվել» բառերով.

բ. «(այսուհետ՝ անձինք):» բառերը փոխարինել «(այսուհետ՝ անձինք), բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի՝» բառերով.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-3-րդ ենթակետերով.

«1) յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև այդ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե մինչև այդ տարվա փետրվարի 20-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն,

2) պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակում ստացած) անձինք պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն,

3) ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե անձինք ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկա-

վարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:»,

2) 2-րդ մասում «վճարողներ են համարվում» բառերը փոխարինել «վճարող կարող են համարվել» բառերով և մասը «արտոնագրային վճարներով հարկվող» բառերից հետո լրացնել «և (կամ) ընտանեկան ձեռնարկատիրության» բառերով,

3) 3-րդ մասում՝

ա. 3-րդ կետից հանել «, գյուղատնտեսական արտադրանք արտադրողները» բառերը.

բ. 4-րդ կետի «բ» ենթակետում «այն անձին» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին» բառերով,

գ. 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» ենթակետով.

«դ. նախորդ տարվա ընթացքում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N5 հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել են սույն օրենքի 5-րդ հոդվածի չորրորդ պարբերության 1-3-րդ կետերով նախատեսված խախտումներ.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերության 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ միասնական հայտարարություն) է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմին (նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին)՝ միասնական հայտարարությունում նշված օրվանից (բայց միասնական հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 30-րդ օրվանից ոչ շուտ) մինչև միասնական հայտարարությունում նշված տարվա ավարտը.»,

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Եթե առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N5 հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել է ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում, ապա՝

1) 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում չորրորդ անգամ ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառու-

թյան հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում.

2) 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում երրորդ անգամ ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում.

3) 2016 թվականի և դրան հաջորդող յուրաքանչյուր տարվա ընթացքում ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջի կրկնակի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Եթե «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N5 հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջը խախտված լինելու մասին ստուգման ակտը կամ ստուգում իրականացնող անձանց գործողությունները սահմանված կարգով բողոքարկվել են, ապա դիմում-գանգատը մերժվելու մասին որոշումը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից՝ տվյալ տարում և դրան հաջորդող մեկ տարում: Դիմում-գանգատը բավարարվելու կամ դիմում-գանգատը մերժելու վերաբերյալ որոշումը դատական կարգով չեղյալ ճանաչվելու դեպքերում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողը շարունակում է համարվել շրջանառության հարկ վճարող՝ այն պահից, որ պահից ստուգման ակտի համաձայն, դադարել էր համարվել շրջանառության հարկ վճարող:

Սույն հոդվածի առաջին պարբերության 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու պահից (օրվանից) մինչև այդ օրվան հաջորդող 30-րդ օրը հարկ վճարողը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում միասնական հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և պահը (օրը):»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. առաջին նախադասությունը «հետևյալ դրույքաչափերով» բառերից հետո լրացնել «, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ» բառերով.

բ. դրույքաչափերի աղյուսակում «առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ» տողում «3.5%» դրույքաչափը փոխարինել «1%» դրույքաչափով.

2) 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքում խախտման օրվան հաջորդող օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար (շրջանառության հարկի հաշվարկը ներկայացնելով այդ ժամանակահատվածի համար), իսկ 2-րդ կետի «բ» ենթակետով և 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքերում խախտման օրը ներառող և մինչև տվյալ տարվա ավարտն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների համար շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 5% դրույքաչափով:»,

3) 3-րդ մասը «1-ին մասով» բառերից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքերում՝ 1.1-ին մասով» բառերը:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Շրջանառության հարկ վճարողներն այդ գործունեության մասով շահութահարկի և եկամտային հարկի կանխավճարներ չեն կատարում:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները պարտավոր են, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, փաստաթղթավորել բոլոր ապրանքների ձեռքբերման գործարքները:»:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, նվազագույն շահութահարկի վճարումները» բառերը և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Շրջանառության հարկի վճարման դադարեցման պահից տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում առևտրային կազմակերպությունները շահութահարկի, իսկ անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկի կանխավճարները հաշվարկում և վճարում են՝

1) միասնական հայտարարությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակի համար կանխավճարի վճարման համար օրենքով սահմանված վերջնաժամկետը ներկայացնելու դեպքում՝ տվյալ եռամսյակի համար կանխավճարի վճարման ամսաթվից սկսած՝ օրենքով կանխավճարի վճարման համար սահմանված ժամկետներում,

2) միասնական հայտարարությունը յուրաքանչյուր եռամսյակի համար կանխավճարի վճարման համար օրենքով սահմանված վերջնաժամկետից հետո, բայց մինչև տվյալ

եռամսյակի ավարտը ներկայացնելու դեպքում՝ տվյալ եռամսյակին հաջորդող եռամսյակի համար կանխավճարի վճարման ամսաթվից սկսած՝ օրենքով կանխավճարի վճարման համար սահմանված ժամկետներում:

Եթե միասնական հայտարարությունում նշված է ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու՝ միասնական հայտարարության ներկայացման ամսաթվից տարբերվող ամսաթիվ, ապա սույն պարբերության 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթները կիրառվում են՝ հիմք ընդունելով միասնական հայտարարությունում նշված ամսաթիվը»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «պայմաններին չբավարարելու» բառերից հետո լրացնել «և շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած լինելու» բառերով, «համարել է իրեն շրջանառության հարկ վճարող և կատարված գործողությունները ձևակերպել է» բառերը փոխարինել «շարունակել է իրեն համարել շրջանառության հարկ վճարող և սույն օրենքի 5-րդ հոդվածի վեցերորդ պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել միասնական հայտարարությունը՝ կատարված գործողությունները ձևակերպելով» բառերով, իսկ «5-րդ մասով» բառերը փոխարինել «առաջին պարբերության 5-րդ կետով» բառերով,

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մասով.

«3.1. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N5 հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում սույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում՝

1) 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը՝

ա. առաջին անգամ խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է նախազգուշացում.

բ. երկրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով.

գ. երրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև խախտման օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5% դրույքաչափով.

դ. սույն օրենքի 5-րդ հոդվածի չորրորդ պարբերության 1-ին կետով նախատեսված դեպքում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի՝ 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև ԱԱՀ վճարող համարվելու օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության

(իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5% դրույքաչափով,

2) 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝

ա. առաջին անգամ խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով.

բ. երկրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում մինչև խախտման օրն ընկած՝ ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5% դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակաշրջանների համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը.

գ. սույն օրենքի 5-րդ հոդվածի չորրորդ պարբերության 2-րդ կետով նախատեսված դեպքում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի՝ ընթացիկ տարում շրջանառության հարկ վճարող համարվելու օրվանից մինչև ԱԱՀ վճարող համարվելու օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5% դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը,

3) 2016 թվականի հունվարի 1-ից հետո՝

ա. առաջին անգամ խախտում արձանագրվելու դեպքում մինչև խախտման օրն ընկած՝ ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար գործունեության այդ մասով - իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5% դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակաշրջանների համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը.

բ. սույն օրենքի 5-րդ հոդվածի չորրորդ պարբերության 3-րդ կետով նախատեսված դեպքում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի՝ ընթացիկ տարում շրջանառության հարկ վճարող համարվելու օրվանից մինչև ԱԱՀ վճարող համարվելու օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության

այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5% դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը:»,

3) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հարկային մարմնի կողմից սույն հոդվածով նախատեսված նախազգուշացումը կիրառվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:»:

Հոդված 8. Օրենքը 14-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով.

«Հոդված 14.1. Փաստաթղթավորման պահանջի ապահովման նպատակով հայտարարագրի ներկայացումը կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ տվյալների մուտքագրումը

Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների համար սույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները համարվում են բավարարված նաև այն դեպքում, եթե մինչև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N5 հավելվածով սահմանված կարգով իրականացվող ստուգումը, շրջանառության հարկ վճարողը վերադաս հարկային մարմնի ղեկավարի սահմանած ձևով ու կարգով (էլեկտրոնային կամ թղթային եղանակով) հարկային մարմին հայտարարագիր է ներկայացրել կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ տվյալներ է մուտքագրել իրեն ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռքբերված ապրանքների վերաբերյալ, և այդ հայտարարագրի կամ տվյալների հիման վրա հարկային մարմինը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N5 հավելվածով սահմանված կարգով իրականացվող ստուգմամբ արձանագրել է ձեռքբերված համապատասխան ապրանքների առկայությունը կամ նույն հավելվածով սահմանված ժամկետում շրջանառության հարկ վճարողի մոտ ստուգում չի իրականացվել:»:

Հոդված 9. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է վերադաս հարկային մարմինը:»:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հոկտեմբերի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 1-ին կետի, որոնք ուժի մեջ մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» պարբերությամբ Օրենքի 4-րդ 1-ին մասում լրացվող 1-ին կետով նախատեսված՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետը կիրառվում է միայն այն դեպքում, եթե հարկային մարմինը հարկ վճարողին ծանուցել է սույն օրենքով նման վերջնաժամկետ սահմանված լինելու մասին: Եթե հարկային մարմինը սույն մասով նախատեսված ծանուցումը հարկ վճարողին ուղարկում է սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» պարբերությամբ սահմանված ժամկետներից հետո, ապա որպես շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետ՝ սահմանվում է հարկ վճարողին ծանուցումը տրամադրելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը:

Օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների ձեռքբերման պարտադիր փաստաթղթավորման պահանջը չի տարածվում մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռքբերված և 2014 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդի վրա, որի մասին հարկ վճարողները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևի տեղեկանք: